ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«29» 05 2019 թ.

№ [illegible]

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի տնօրեն
Է. Փոթոյանին

ք. Երևան, Ավետիսյան 76շ. բն. 17
էլ. հասցեն՝ hermine.farmec@mail.ru
ՀՎՀՀ 00650302

Ի լրումն 21.05.2019թ. ելք ԴՎԱ/1924 գրության՝ կից ներկայացվում է ՀՀ պաշտպանության նախարարության և «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի միջև 20.03.2018թ կնքված N ԳՀԱՊՁԲ-9/1-5 ծածկագրով գնման պայմանագրի լուծարման վերաբերյալ ծանուցման շտկված տարբերակը, միաժամանակ խնդրում եմ 21.05.2019թ. ելք ԴՎԱ/1924 գրությունը չքննարկել:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի միջև 20.03.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-9/1-5 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր) և դրա հիման վրա 27.04.2018թ. կնքված N1 համաձայնագրի (այսուհետ՝ նաև Համաձայնագրի) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2018թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակները՝ նշված քանակներով՝

Ապրանքի անվանում	Չ/մ	Քանակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Չմատակարարված քանակ
Ամոքսիցիլին j01ca04 /Ամոքսիցիլին, amoxicillin/	դեղահատ	100,000	30,000	30,000	40,000	**70,000**
Բենզիլպենիցիլինի աղեր j01ce01 /Բենզիլպենիցիլինի նատրիում, benzylpenicillin sodium/	սրվակ	120,000		50,000	70,000	**31,000**

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակների մասով ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. մայիսի 6-ին միակողմանի մասնակի լուծում է ԳՀԱՊՁԲ-9/1-5 ծածկագրով Պայմանագիրը դրա և հիման վրա կնքված N1 Համաձայնագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել ***56,016.9 (հիսունվեց հազար տասնվեց ՀՀ դրամ իննսուն լումա)***՝ որպես պայմանագրով նախատեսված տույժ, ինչպես նաև տուժանք՝ ***907,200 (ինը հարյուր յոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ*** որպես պայմանագրի կատարման ապահովում (կնքված պայմանագրի գումարի 10%-ը)՝ 900005000758 հաշվեհամարին:

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

0044, Երևան, Բագրևանդի 5, Հեռ.՝ (+374 10) 29 45 45, Ֆաքս՝ (+371 10) 29 46 13, Էլ.փոստ՝ depart@mil.am
Ереван, Багреванда 5, 0044, Тел: (+374 10) 29 45 45, Факс. (+374 10) 29 46 13, Эл.почта: depart@mil.am
0044, 5 Bagrevans Str., Yerevan, Tel. (+374 10) 29 45 45, Fax: (+374 10) 29 46 13,E-mail: depart@mil.am